

Բաժանորդագիրն կԱՆՈՒՆԻՔ թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի, արիշ երկրորդ համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրով կ'ընդունուի 1 զրշնոցը 34 փարայի հաշւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԵԱՂԻԿ Վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Սո Տեօթէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Դ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Պահչէ-Գաթու, Թաշ Խան, քիւ 50

ԵԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بفتح قيو سنده طاش خاند
•• نومروده «زاغيك» غزته سى مديرى
بالا قاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

Հոռ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 25

ՇԱԲԱԹ

4 ԱՊՐԵԼ 1892

**ՅԱՂԻԿԻ ՆԵՐԿԱՅ ԹԻՒՆ
Ե ԵԱՂԱՋԻԿԱՅ ԹԻՒՐ ՈՒԹ
ԵՐԵՍ ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՆԵՐԱ
ԳԱՌԱՔԱՐ, ԱՆԱԿՆՈՒՆԵՐԻ
ԱՅԱՏՃԱՌԱԼ ՄՐ:**

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար Ակնայ վիճակէն աշխարհական պատգամաւոր ընտրուած է տեղւոյն գաւառական ընդհանուր ժողովոյ ատենապետ Մեծ. Յովսէփ Էֆ. Զանիկեան. իսկ Ակնայ Առաջնորդ Գեր. Յակոբ վարդ. Յովսէփեան անձնական տկարութեան պատճառաւ չկրնալով անձամբ յիշմիածին ուղևորիլ իբրեւ եկեղեցական պատգամաւոր իւր վիճակին, իւր կողմանէ փոխանորդ կարգած է քաղաքին Ս. Գէորգ եկեղեցւոյ քահանայներէն Յակոբեան Արժ. Տ. Յարութիւն քահանայն:

— Ամասիոյ կողմանէ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար աշխարհական պատգամաւոր ընտրուած է տեղւոյն քաղաքական ժողովոյ Ատենապետ Մեծ. Կարապետ Էֆ. Փափագեան:

— Պուլկարիոյ Հայոց կողմանէ աշխարհական պատգամաւոր ընտրուած է Սիլվատրեցի Մեծ. Համբարձում Էֆ. Մ. Յարութիւնեան:

— Շուշիէն Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար թեմական պատգամաւոր ընտրուել է Թիֆլիսաբնակ փաստաբան Պ. Ներսէս Աթաբէկեան, իսկ պատգամաւորի Փոխանորդ՝ Պ. Բալաբէգ Մելիք. Դարակէօգեան:

— Փետր. 23ին ի Մուսկուա կատարուած պատգամաւորի ընտրութիւնն անվաւեր համարուելով, մարտ 8ին երկրորդ անգամ ընտրութիւն եղեր և 68

քուէից մեծամասնութեամբ ընտրուել է իրաւարան Պ. Ստ. Մամիկոնեան, որ ապրիլ 12ին ի Նոր-Նախիջևան պիտի մասնակցի Պետարապոյ Հայոց թեմական պատգամաւորի ընտրութեան:

— Ռուսմանիոյ Հայոց ներկայացուցիչք մարտի 20ին ի Պուքրէշ գումարուելով ընդ նախագահութեամբ Գեր. Տ. Գէորգ Մ. վարդապետի Երէցեան, Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար իրենց կողմանէ պատգամաւոր կարգեր են եաշի ազգայիններէն զՊ. Սողոմոն, լեզուադէտ եւ ուսեալ անձն:

— Էջմիածնայ Սինօդն բժիշկ Մ. Զաքարեանցն արձակել է իւր բոլոր պաշտօններէն և նորա տեղ Թիֆլիսէն հրաւիրել է բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանցը որ երջանկայիշատակ Գէորգ Գ. Կաթողիկոսի մահուան ժամանակ Վեհարանի բժիշկն էր և որ վերջերս առժամանակեայ խմբագիր էր Թիֆլիսի Տառագ ամսաթերթին:

— Բաբերդի թեմէն Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար պատգամաւոր կարգուել են Արժ. Տ. Աշոտ քահանայն և Գաւառ. ժողովոյ նախորդ ատենապետ Մեծ. Կարապետ Էֆ. Մարգարեան:

— Վանայ առաջնորդական ընտրութեան ի դիւրութիւն Պատրիարքարանէն յրկուած ընտրելեաց ցանկը կը պարունակէ երեք եպիսկոպոսաց անուններ. Մելքիսեդեկ Մուրատեանց, Գրիգորիս Յովհաննէսեան և Վահրամ Մանկունի:

— Գրիգոր Արծրունի և իւր մի քանի համախոհք Էջմիածնայ Սինօդին բողոքած լինելով մարտ 8ին ի Թիֆլիս կատարուած թեմական պատգամաւորի պատուարներ ընտրութեան դէմ, Սինօդը 2 քուէի դէմ 4 քուէով այդ բողոքներն անտեղի վճուել է: Փոքրամասնութիւն կազմող Սինօդականք են երեմիա եպիս. Գալստեան և Արիստակէս եպիս. Սեդրակեան:

— «Ծաղիկ»ի վերջին թուով ծանուցինք թէ Էջմիածնայ Գէորգեան ձեմարանի տեսչութեան պաշտօնն ստանձնել է Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոս, Տէր-Գաւառեան Սարգիս եպիսկոպոսի տեղորոշն համար հրաժարած է կըսուէր, Թղթաբերը կը բերէ մանրամասնութիւններ Արիստակէս եպիսկոպոսի այս անուանման նկատմամբ, Տէր-Գաւառեան Սարգիս Սրբազան չէ հրաժարած տեսչութենէն, այլ ընդհակառակն ուսուցչական ժողովոյ մեծամասնութեան վճռի համաձայն՝ տեսչի օգնական Պ. Սաղատեղովն անընդունակ ճանաչելով, ինքը գրաւոր բողոքներ է Սրբազան Երեմիա եպիսկոպոսին, բայց այդ գրաւոր բողոքը Նորին Սրբազնութեան կարգացող քարտուղարը սխալ բացատրելով նորա իմաստը, այնպէս կը հասկցնէ իբր թէ Սարգիս եպիս. կը հրաժարի տեսչութեան պաշտօնէն, ուստի և Տեղապահ Երեմիա եպիսկոպոս կ'շտապէ տեսուչ կարգել զՍեդրակեան Արիստակէս եպիսկոպոս: Այժմ Գեր. Սարգիս եպիսկոպոս գրաւոր բացատրութիւն է տուել Սինօդին և կը պնդէ թէ ինքը օրինաւորապէս Տեսուչ կարգուած է ձեմարանին և մինչև նոր Կաթողիկոսի գալը մտադիր չէ իւր պաշտօնէն հրաժարիլ: Սարգիս եպիսկոպոս «կամենում է իրեն յանձնուած աւանդը յանձնել միայն Ս. Լուսաւորչի աթոռի ժառանգին»:

— Թաւրիզի Հայք, ամբողջ Պարսկաստանի համար առաջին անգամը լինելով, կիրակնօրեայ դպրոց մը բացել են այս օրերս:

— Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրն երկուշաբթի օր Գաղաթապետութեան պաշտօնատունը գնաց և վսեմ. Բրտման փառայի ներկայանալով, խնդրեց Զատիկէն առաջ փութացնել Եջնիգարուի հրկիզելոց համար եղած նպաստներու առաքումը: Ն. Վսեմութիւն խոստացաւ հարկ եղածը կարգադրել:

— Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ Մանգրումի Էմբեար լրագիրը, որ տասն և հինգօրեայ դադարման դատապարտուած էր, այս պայմանաժամը լրացնելով՝ երկուշաբթի օր սկսաւ հրատարակուիլ:

— Պարտիզակի 18 ընտանիքէ բաղկացեալ Հայ-Հոռովմէական հասարակութենէն հինգ ընտանիք դարձեր են ի ծոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

— Ի Նոր-Նախիջևան, Պ. Ռափայէլ Պատկանեան որ ամբողջ ձմեռը հիւանդ էր, ապաքինելու վրայ է և յոյս կայ որ հետզհետէ աւելի առողջանայ: Հիւանդը խնամող բժիշկներն են եղեր Պ. Պ. Իսահակ Ալաճալեան և Քեչեկեան:

— Կոշկասեան Գրաքննական Մասնաժողովոյ արեւելեան լեզուաց Աւագ Գրաքննիչ Ալէքսանդր Քիւմիշեանց ըստացեր է Պետական Խորհրդականի աստիճան:

— Թիֆլիսի Նոր-Դար լրագրոյ բազմահմուտ աշխատակից բժիշկ Միսաք Արամեանց ստացեր է Պետական Խորհրդականի աստիճան:

— Գաղատիոյ Պատր. Փոխանորդ Գեր. Եղիշ Ծ. վարդպ. Գալֆայեան մարտ 21ին իւր պաշտօնավայրը ժամաներ և մեծ պատուով ընդունուեր է:

— Մշոյ ընդհանուր վանհայր-Առաջնորդ Գեր. Ներսէս Ծ. վարդ. Խառախանեան, իբրև եկեղեցական պատգամաւոր իւր թեմին, էջմիածին պիտի երթայ՝ մասնակցելու Կաթողիկոսական ընտրութեան:

— Երեքշաբթի օր Խըրզսի Շէրիֆի հանգիսին առթիւ, Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանի ու Նախակրթարանի 300ի մօտ աշակերտք՝ առաջնորդութեամբ իրենց Տնօրէնին, խնամակալութեան և ուսուցչաց՝ Արամեան պանդոկին առջև բարեկիցեան և Կայսերական Թափօրը անցնելու պահուն, սկսան երգել Օգոստոսիաու վեհապետին ձօնեալ երգ մը, որուն գեղատառ բնագիրը՝ ոսկեգրուազ չրջանակի մը մէջ առնուած՝ մեծաւ խնամքով պատրաստուած էր, մատուցուելու համար Ն. Կ. վեհափառութեան: Իսկ Պոլսոյ կողմը, Սօսք-Ձէյմէի ճամբուն վրայ, բարեկիցեան էին Խաղաղիկ Գալֆայեան Որբանոցի աշակերտուհիք, առաջնորդութեամբ իրենց մօր Երանուհի մայրապետին և Որբանոցի պաշտօնէից: Գում գաբուի Միլիճանեան վարժարանի աշակերտք ևս՝ իրենց Տնօրէնին և ուսուցչաց առաջնորդութեամբ բարեկիցեան լինելով, Կայս. Թափօրին անցած պահուն երախտագիտական երգ մ'երգեցին և մատուցին նրբակերտ ու անդուստայ փառաւոր չրջանակի մը մէջ ոսկեգոծ տառերով գրուած ոտանաւորքերով:

— Իսկիւտարի Անգլո-Երեւան վարժարանի սանուհիք՝ Զատկական տօնի առթիւ ըստ սովորութեան՝ չրջագետ շինած են 17 աղջկանց, որոց ճերմակեղէնները հոգացեր է բարեպաշտ տիկին մը:

— Իսկիւտար Նոր Թաղի երիտասարդներէն խումբ մը 34 աղջատիկ երկսեռ տղայոց հաղուստ շինած են:

— Գեր. Գէորգ Ծ. վարդ. Երէցեան Զատիկ օրերն Պէյլիքտէրէի եկեղեցին պիտի մնայ ի հոգեւոր մխիթարութիւն գիւղին ժողովրդեան:

— Պէյլիքտէրէի Արժ. Տ. Նիկողոս քահանայ Թէյլէքեան ի Տէր. հանգչելով, յուղարկուութեան և Օծման արարողութիւնը երեքշաբթի օր կատարուեցան Մայր եկեղեցւոյ մէջ: Օծումը կատարեց Գեր. Սիմէօն Արքեպիսկոպոս Սէֆերեան: Մարմինն ամփոփուեցաւ Պալքըլի գերեզմանատան մէջ:

— Թերջանի Փոխ-Առաջնորդ Գեր. Տ. Ներսէս վարդ. Տէր Սարգսեան՝ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար էջմիածին պիտի ուղևորի: Նոյն վիճակին կողմանէ աշխարհական պատգամաւոր ընտրուեր է Բազաճիցի Յովհաննէս էֆ. Գալստեան:

— Գոհութեամբ և շնորհաւորելով կը ծանուցանեմք թէ, Վեհ. Սուլթանը Ոսմանի աստիճան շնորհեց Պրուսայի Հայոց առաջնորդարանին քարտուղար Մեծ. Ազնիւ էֆէնդի:

— Գաղաքական ժողովը Տիգրիկի կալուածոց Հոգաբարձութիւնը կազմեց հետեւեալ անձերէն. Կիւլպէնէի էֆ. Կիւլպէնէեան, Յարութիւն էֆ. Գրեմաճեան, Սաչիկ էֆ. Կամարական, Խաչիկ էֆ. Սօրաասանեան, Միկրոի էֆ. Սեղանիկեան, Գրիգոր էֆ. Լուսիկեան և Եղիա էֆ. Ջրարիկեան:

— Ռոտոսթոյի նորընտիր Թաղական Խորհրդոյ անդամք են Տեառք Գրիգոր Աճէմեան, Յակոբ Աճէթեան, Մ. Մեսրոպ Թաղեհոսեան, Գէորգ Թարագճեան, Սահեփան Թարագճեան, Միկրոի էֆ. Պէքեարեան, Յովհ. Սաղաքեան, Մ. Կարապետ Տէմիրեան և Յակոբ Փօստաճեան:

— Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տ. Տրդատ Ծ. վարդ. Պալեան մարտ 22ին Կըրէնի հասեր է ընկերակցութեամբ Մայր եկեղեցւոյ աւագերէց Արժ. Տ. Մարտիրոս Քահանայ Զարդարեանի, Մեծ. Համբարձում էֆ. Մօստիջեանի և սորա որդւոյն Վահան էֆ. Մօստիջեանի:

— Պրուսայի Առաջնորդ Գեր. Տ. Բարթոլոմէոս Սրբազան Արքեպիսկոպոս Ս. Զատիկի առաւօտուն պիտի պատարագէ Գուգլունճուկի եկեղեցւոյ մէջ: Նորին Սրբազնութիւն Զատիկի առթիւ շնորհաւորական գիրեր յղելով իւր թեմի աղգայնոց, պատուիրեր է նաև աղօթել փսն անգին կենաց Վեհ. Սուլթանին:

— Միքայէլ էֆ. Յակոբեան Ենի-Գաբուի Մ. Առաքելոյ վարժարանին 40 որբ և աղջատիկ սանուց մէկ մէկ ձեռք հաղուստ շինել տուեր է:

— Բեդրսպուլիէն եկեղեցական պատգամաւոր ընտրուեր է Պ. Եղուկեան 50 քուէով: Քուէարկուաց թիւն է եղեր 67:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Մասնաւաճառ Փրանսական կղզւոյն մէջ Անգլիոյ իւր հպատակաց համար բացած դատարանաց ջնջումը խնդրուած է Փրանսական կառավարութեան կողմէ: որ ի փոխարէն կը հաւանի ջնջել իւր հպատակաց համար ունեցած դատարաններն ի Չանգիպար: Անգլիոյ պատասխանը դեռ յայտնի չէ:

— Պիւմանիոյ մայրաքաղաքին Մանտալէի մեծ մասն հրոյ ճարակ եղած է: Հրդեհը երեք օր տևեր է և վնասը մէկ միլիոն անգլ. ոսկի կը հաշուի:

— Էմիլ փառա հասեր է ի վատեւայ, իւր նախկին մայրաքաղաքն ուր վերջնապէս հաստատուեր է:

— Պապը մերժեր է ընդունիլ՝ առանց Փրանսական կառավարութենէն հրաման առնելու Հոռով գացող Փրանսացի եպիսկոպոսները:

— Ռուսիոյ Սիւնհոդը որոշեր է որ օրթօտքսութիւն ընդունող ամուսնացեալ Հրեայք արտօնեալ լինին քրիստոնեայ կին առնուլ, երբ իրենց Հրեայ կիները չ'ուզեն իրենց պէս հաւատաւ փոխ լինել:

— Գերմանիոյ նախարարական խնդիրը չէ վերջացած դեռ: Բրուսիոյ յատուկ նախարարապետի մը համար Երեսի. ժողովէն խնդրուած վարկին վիճարանութիւնը Զատիկէն ետքի մնացած է:

— Անգլիոյ մէջ գործարանաց փակման համար պարտաւ մնացող գործաւորաց թշուառութիւնը քիչ մ'ամօքելու համար քաղաքապետութիւնը հանրային շէնքերու կառուցման ձեռնարկել որոշած են:

— Անգաթէ՝ որ անցեալներն ի փարիզ Տելաու պառնուհին պալանած և անոր սպասուհւոյն վրայ ևս սպանութիւն փորձած էր, ապրիլ 10ին գլխատեցաւ:

— Ռուսիոյ երևոական նախարար Պ. Վիշնէկոյցի շարաթէ մ'ի վեր ծանրապէս հիւանդ է, նոյնպէս և արտաքին գործոց նախարար Պ. տը Կիրս:

— Ֆրանսայի Երեսի. ժողովը երկուշաբթի աւուր նստին մէջ կառավարութեան խնդրած 2,925,000 Փր. ի վարկը առաւ, Տահմէյի մէջ իւր ունեցած զօրաց թիւն աւելցնելու և դիրքերը զօրաւոր բռնելու համար:

— Միացեալ Նահանգաց ժողովուրդը որ երեք չոգենաւ ալիւր զրկած էր Ռուսիոյ սովելոց, այս անգամ 16 հազար ոսկւոյ գումար մ'ալ զրկած է իրենց Բեթերսպուրիի դեպարտին որ այդ գումարին երկու երրորդ մասը Անկլո-ամերիկեան եկեղեցւոյ մասնախմբին յանձնած է՝ բաշխուելու համար կարօտելոց, մնացեալն ալ Զարեիչին նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովոյն տուած է:

— Յունաստան 1120000 Փր. ի փոխառութիւն մ'ըրած է որով հանրային պարտուց յուլիսի կտրոնին վճարումն ալ ապահովուած է:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Գէորգ Եպիսկոպոս Սուրենեանց, Վիսակաւոր Առաջնորդ Թեմին Հայոց Աստրախանի:

(Շար. նախորդ թիւէն և վերջ)

1887 մայիսի 22ին (Սինոդի 1671 թիւ հրամանագրով) էր որ Սուրենեանց Գէորգ Եպիսկոպոս նշանակուեցաւ Վիսակաւոր Առաջնորդ Թեմին Հայոց Աստրախանի, Յունիսի 30ին Աստրախան մուտ գործելով, մեծ և հանգիստաւոր ընդունելութիւն գտաւ և սկսաւ իւր գործունէութիւնը գլխաւորապէս դպրոցներէն: Եղայոց Միակեան դպրոցի մէջ՝ ուր կ'ուսանէին եօթն աշակերտ, ժողովեց 40 աշակերտ, օրիորդական դպրոցի մէջ՝ ուր կ'ուսանէին 80 օրիորդ, այս թիւն հասաւ մօտ 130ի: Նորա միջոցաւ նորոգեցին առաջնորդարանը, դպրոցական շէնքը, ամբողջ եկեղեցական կալուածները. օրիորդական դպրոցի կից կառուցին երկյարկանի շինութիւնը, որով ընդարձակուելով դպրոցական տունը, երկդասեան դպրոցը փոխարկուեցաւ երեքդասեանի: Այժմ պատրաստութիւն կը տեսնեն արհեստական դպրոցի համար նոր շէնք կառուցանելու: Պէտք է ըսել որ Նորին Սրբազնութիւնը կը կատարէ նաև Թեմական Տեսչի պաշտօնը: Քաղաքի եկեղեցիք ներքուստ և արտաքուստ գեղեցիկ կերպով նորոգուեցան: Եկեղեցական անկանոն երգեցողութիւնը կարգի բերաւ և Բագուէն հրաւիրելով երաժիշտ Կարա-Մուրզան, քառաձայն ներդաշնակ երգեցողութիւն մտցուց եկեղեցեաց մէջ, իւրաքանչիւր եկեղեցւոյ խումբը կազմելով 40 տղայներէ, նշանակելով առանձին խմբապետներ ու ճիւղով և որոշեալ պայմաններով:

Մինչեւ Գէորգ Եպիսկոպոսի գալը Աստրախան, արքունի միջնակարգ երկսեռ Գիմնազիոններու և Բէալական դպրոցի մէջ կրօնի ուսման համար շարժական ընդ ամէնը մէկ մէկ ժամ դաս էր նշանակուած, և այդ մէկ ժամ դասն ալ կ'աւանդուէր՝ դասերն սկսելէ առաջ՝ բոլոր հայ աշակերտները մէկ դասարանի մէջ հաւաքած, և արդէն այդ դասը պարտաւորիչ ալ չէր: Իսկ Գէորգ Սրբազան Աստրախանի գալով, մեծ ուշադրութիւն դարձուց այդ կարևոր խնդրոյ վրայ և թղթակցելով Ղազանու ուսումնական չլծանի Հոգաբարձուի հետ, կարողացաւ իրաւունք ըստանալ, որ երկսեռ գիմնազիոններու և Բէալական դպրոցի մէջ շարժական լինելու առ նուազն 12 դաս կրօնի և Հայոց եզուի, և այն՝ իւրեւ պարտաւորեցու-

ցիչ դաս: Եւ առանձին կրօնուսոյց քա-հանայներ նշանակելով, անոնց պաշտօնավարութիւնն եւս ապահովեց ուժիկով: Իւրաքանչիւր տարի հարցաքննութեանց ինքն անձամբ ներկայ կը լինի: Գէորգ Սրբազան իւր հօտէն ժողովեց մօտ տասնեակինգ հազար (15000) ռուբլի և այդ գումարը դրամատուն դնելով, նորա տոկոսի մի մասով կը հայթայթէ երեք կրօնուսուցիչներու առձիւր, իսկ միւս մասը կը բաժնէ երգեցիկ խմբի մէջ գտնուած չքաւոր տղայոց:

Թեմի եկեղեցեաց գործակալաց և թաղականաց (առեսահայոց բառով՝ երեսփոխանաց) համար կանոններ սահմանեց, և զանոնք տպագրել տալով յեջմիածին, բաժնեց գործակալաց և երեսփոխանաց ի հրահանգութիւն, որով իւրաքանչիւրը ճշդութեամբ կը ճանաչէ իւր իրաւանց սահմանը: Գէորգ Սրբազան կազմեց նոյնպէս «Աստրախանի Հայ Կանանց Խնամատար Ընկերութիւն», խմբագրելով որոշ կանոնադրութիւն, զոր տպել տալով յեջմիածին, բաժանեց Հայ տիկնանց մէջ, և ահա՛ երկրորդ տարին է որ ամենայն ջերմեռանդութեամբ կը գործեն, հոգալով ազգային օրիորդական դպրոցի՝ չքաւոր աշակերտուհեաց հանդերձը և ամենայն պիտոյքը: Նաև նշանաւոր ընտանեաց Տիկնայք և Օրիորդք շարժելով մի անգամ ժողովելով օրիորդական դպրոցի մէջ, կար ու ձեւով կը պարապին, և չքաւոր երկսեռ սանոնց համար իրենց ձեռքով հանդերձ կը պատրաստեն: շատ տիկնանք մինչեւ անգամ նիւթեղէնը իրենց սեպհականութեան կը նուիրեն, բաց ի տարեկան տուրքէն:

Գէորգ Եպիսկոպոս Սուրենեանց նոյնպէս հաստատեց «Վարչութեան Օժանդակ Գանձարան ի նպաստ չքաւոր եկեղեցական ստորին պաշտօնէից», որոշ կանոնադրութեամբ. արդէն բաւական գումար ունի Օժանդակ Գանձարանը, մինչեւ անգամ պարգեւաւոր արժեթղթեր ունի, և չքաւոր հոգեւորականք կ'օգտուին այդ Գանձարանէն: Գէորգ Եպիսկոպոս Աստրախանի թեմէն Ս. Էջմիածնի նորոգութեան համար ժողովեց տասնեակիւ հազար (12,000) ռուբլի: Գէորգ Սրբազանի տընօրէնութեամբ բացուեցան Պետտիգորսկ քաղաքի երկսեռ հոգեւոր դպրոցները, Պետրովսկ քաղաքի տղայոց և Գէորգեւսկ քաղաքի օրիորդաց հոգեւոր դպրոցները. նաև շինեցին Պետտիգորսկեայ երկյարկ դպրոցական շէնքը, որոյ շինութեան առաջին հիմնաքարը դրաւ արժանայիշատակ Խաչատուր Թաթևեանց, որ նուիրեց 3000 ռուբլի: Նոյն դպրոցական տան շինութեան հա-

մար Սուրենեանց Սրբազան Ղալար քաղաքի ուսումնասէր ազգայիններէն հաւաքեց 500 ռուբլի: Նոյնպէս շինեցին Պետրովսկեայ դպրոցը և տեղական հաւաքած 500 ռուբլի լինելով և դրժուարանալով շինութեան ամբողջ ծախքը հոգաւ, Գէորգ Սրբազան իւր վիճակէն հաւաքեց 700 ռուբլի և զրկեց դպրոցական Հոգաբարձութեան, որ այսպէս կարողացաւ աւարտել շինութիւնը, և ահա՛ երրորդ տարին է որ ուսումը կը շարունակուի: Նորին Սրբազնութեան օրհնութեամբ և թոյլտուութեամբ Եկատերինօդարցիք նոյնպէս կառուցին մի փառաւոր և հոյակապ շէնք երկսեռ դպրոցաց համար, որ պատիւ կը բերէ տեղական Հայ հասարակութեան: Նաև Նորին Սրբազնութեան յորդորմամբ Ստաւրապօլսեանկ միլիօնատէր Մարգար աղա Պօպովեանց նուիրեց տեղական երկսեռ ազգ. հոգեւոր դպրոցաց 20,000 ռուբլի, որոյ տարեկան 1200 ռուբլի տոկոսով երկու դպրոցները ընդմիշտ ապահովեցին իրենց գոյութիւնը: Գէորգ Սրբազան, նկատելով վիճակային արդեանց նուազութիւնը և Առաջնորդարանի կարօտութիւնը, Տէրութեանէն հող խնդրեց և 1889 յունվարի մէկէն Կալուածական Նախարարութեանէն ըստացաւ Աստրախանի մօտ 120 արտավար վարելահող, ի մշտնջենաւոր սեպհականութիւն Աստրախանի Հայոց Առաջնորդարանի, և սեպհականութեան պաշտօնական թղթերը և գետնի հաստատեալ յատակագիծը յանձնեց՝ առաջադրութեամբ Կոնսիստորիայի՝ գանձարանին յանկորուստ պահպանութիւն:

Գէորգ Սրբազան, ուր որ եղած է, միշտ բարձր է պահած հոգեւորականութեան դրոշակը, ամենայն տեղ նա համակրութիւն է վայելած, ո'չ թէ միայն ազգայիններէն, այլ մինչև անգամ օտարազգիներէն, և այդ անձնական համակրութեան շնորհիւ շատ դժուար գործեր զիւրութեամբ կարգադրած է: Այստեղ մի օրինակ յառաջ կը բերեմ: Գերեզմանատան Ս. Յարութեան շքեղ եկեղեցին կառուցուած է Վօլգայ գետի մէկ ճիւղին վերայ. գետի հոսանքը եղերքը հետզհետէ քանդելով, եկեղեցւոյն շէնքին վտանգ կ'սպառնար, և թէև Առաջնորդարանը Գաղաքային վարչութեան հետ շատ տարիներ է վերբանակցութեան մէջ էր այս մասին, բայց խնդիրը չէր կրցած գոհացուցիչ լուծումն ստանալ: Սուրենեան Սրբազան Աստրախանի երթալուն պէս, տեղեկանալով, ի թիւս այլոց, և այս խնդրոյն և քաղաքագլխի հետ բարեկամանալով, աշխատեցաւ Քաղաքային Խորհրդարանին վճուել տալ հինգ հազար ռուբլի գետեզրը ամրացնելու համար,

որով Ս. Յարութեան եկեղեցին միանգամայն ազատեցաւ անվրէպ վտանգէն:

Սրբազան Գէորգ Սուրենեանց նոյնպէս վայելած է Գէորգ Կաթողիկոսի յարգանքը: Վեհափառ Գէորգ Կաթողիկոս միշտ կը յիշէր թէ՛ — Գէորգ վարդապետ Սուրենեան զիս կը մխիթարէ իւր ջերմեռանդ, հաւատարիմ ծառայութեամբ և վանական կարգապահութեամբ: — մինչև անգամ Մակար Սըրբազան, որ Սուրենեանց Սրբազանի նըկատմամբ մասնաւոր համակրութիւն չէր կարող ունենալ, որովհետև Գէորգ Սուրենեանց նորա կուսակից եկեղեցականներէն չէր, այնու ամենայնիւ ըսած էր թէ՛ « Գէորգ եպիսկոպոս վեղարի պատիւը շատ լաւ է պահում », և նորա արժանաւորութիւնը գնահատելով, մինչև անգամ Աստուածային թեմը յանձնեց նմա:

Գէորգ եպիսկոպոս Սուրենեանց իւր հաւատարիմ, ջերմեռանդ և արգիւնաւոր ծառայութեանց համար ստացած է վարձատրութիւններ Վեհ. Գէորգ Դ. ամենայն Հայոց Սրբազնազոյն Կաթողիկոսէն, ինչպէս 1872 մայիս 5ին ծաղկեայ կերպասեայ փիլոն, նոյն տարւոյ հոկտ. 8ին վարդապետական ականակուռ խաչ և 1882 սեպտ. 25ին եպիսկոպոսական շքեղ պնագէ: Սուրենեանց Գէորգ եպիսկոպոսի համար մեծ և նշանաւոր օր է 1888 սեպտ. 20ը. այդ օրը Վլադիկովիաս քաղաքի մէջ, առաւօտեան ժամը 10ին բաղդ ունեցաւ ներկայանալ նոցին Կայսերական Մեծութեանց, Թագաւոր Կայսեր, Թագուհի Կայսրուհւոյն և նոցին Կայսերական Բարձրութեանց, Ժառանգի Մեծ Իշխան Նիկոլայ Ալեքսանդրովիչի և Մեծ Իշխան Գէորգի Ալեքսանդրովիչի: Նոյն օրը Թերքեան Նահանգապետի օգնական գեներալ Շեպելեյն գալով նորին Սրբազնութեան մօտ, յանձնեց Գոֆմարչալ Իշխան Օթլենսկու հրաւիրութեամբ, նոյն երեկոյեան ժամը 8ին Բարձրագոյն սեղանին մասնակից լինելու:

Ի վերջոյ նկարագրեմ նորա Ֆիզիքական դրութիւնը: Գէորգ եպիսկոպոսն է բարձրահասակ, թիկնաւէտ, համակրելի դէմքով և արդէն ալեխառն մօրուքով, և տեսնողի վերայ կը ներգործէ մի առանձին պատկառելի տալանորութիւն: Կը յաւելում նաև, որ ունի և գրաւոր աշխատութիւններ. Ռուսերէնէ Հայերէն թարգմանած է հին, միջին և նոր դարուց պատմութիւնը, տոհմային պատմութեան կարեւոր յաւելումներով. հին և միջին դարուց պատմութիւնները արդէն տպագրուած են Էջմիածնայ տպարանի մէջ 1871 և 1872 թուականներուն: 1869ին և 1870ին թարգմանական Գիտնական յօդուածներ

ևս հրատարակած է «Արարատ» ամսագրի մէջ:

Գէորգ եպիսկոպոս 1887-1888ին յօգուտ հրկիզեալ Զեյթունց Ասորայ խանի թեմի մէջ ժողովեց 3995 բուբլի և զրկեց Կոստանդնուպօլսոյ Ազգ. Պատրիարքարանի կողմանէ կազմուած մասնաժողովին:

Գէորգ եպիսկոպոս 1879ին Օշական գիւղի մէջ Ս. Մեսրոբայ գերեզմանի վրայ նորակառոյց եկեղեցւոյ շինութեան համար յԱլեքսանդրապօլ հանգանակեց 1500 բուբլի, համաձայն երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթողիկոսի սրբատառ Կոնդակի, ի 14 մարտի 1879 ամի (թիւ Կոնդակի 97):

Գէորգ եպիսկոպոս Սուրենեանց 1876ին Ղարաբաղի մէջ գտաւ Աղուանից կաթողիկոսաց փղոսկրեայ քանդակագործ գաւազանը և ուղարկեց ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսին՝ Մայր Աթոռոյ Թանգարանի մէջ պահելու, և նորին Վեհափառութեան ընկալաւ օրհնութեան Կոնդակի ի 17 յունվարի 1876 ամի (թիւ Կոնդակի 12) այսու բովանդակութեամբ. « Բարեջան Փոռ խանորդի թեմին Ղարաբաղու բարեւ շնորհ Գէորգայ վարդապետի Սուրենեանց ողջոյն և օրհնութիւն: Ընդ « յայտարարութեանդ » որ յ8 Դեկտեմբերի անցելոյ ամի եհասաւ մեզ գաւազան փղոսկրեայ ի ժամանակաց Աղուանից Կաթողիկոսաց, զոր և աւանդեցաք ի պահ Թանգարանի Սրբոյ Տաճարին ի յիշատակ: Իսկ Զեյթունայն խանձանիւղի հանդիսացայք բարեւ զարդութեան նորակերտ Թանգարանի « Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, յորդոր « լինիմք յաւէտ ի նոյն զգացմունս հաւանապարտել առ գիւտ այլոց ևս հընութեանց և հազուադիւտ ձեռագրութեց, զի ամիսիկ յաջողեցուք զնոսին յայսմ կեդրոնի, նախկին և ապագայ փառաց Հայաստանեայց Ս. « եկեղեցւոյ: »

Ս. Էջմիածնի Սինօգը 1885ին հրաւիրեց զԳէորգ եպիսկոպոս Գէորգեան ձեմարանի Տեսչութեան պաշտօնին, բայց նորին Սրբազնութիւն չուզելով հեռանալ երեանայ իւր սիրելի հօտէն, խնդրեց թողուլ զինքն իւր վիճակի մէջ: Սինօգն յարգելով նորա խնդիրը, այլ ոք հրաւիրեց նորա տեղ:

Աւարտած է տպագրութիւնն Սիմօն Էֆէնտի Գաբամաճեանի ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԲԱՍՄԱՍԻՆ:

Մէն մի օրինակն, ընտիր լաթակազմ, կը ծախուի Պոլսոյ համար 15, իսկ գաւառաց համար 18 զրուշի:

Կեդրոնատեղի՝ Կ. Պօլիս, Հաճօքու խան, թիւ 29 վաճառատունն:

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԸ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Ընթերցասէր ազգայիններէն ոմանք «Ծաղիկ»ի միջոցաւ առաջարկեալ մի քանի «կրօնական հարցեր»ու գոհացուցիչ պատասխաններէն թեւադրուած դարձեալ «Ծաղիկ»ի միջոցաւ խնդրած էին գիտնալ թէ՛ «Որո՞նք են այն մարմնաւոր պակասութիւնք, որք կարող են արգելք լինիլ մէկուն՝ ընդունելու որ և է եկեղեցական կոչումն, ինչպէս են՝ քահանայութիւն, վարդապետութիւն, եպիսկոպոսութիւն, և մինչև իսկ կաթողիկոսութիւն»:

Բանասիրաց սոյն հարցին գոհացումն տալու համար եկեղեցական կոչման արգելք եղող մարմնաւոր պակասութիւնները թուել ու բացատրելէ յառաջ, հարկ է նախ՝ գոնէ համառօտիւ բացատրել թէ՛ ի՞նչ է քահանայութիւնն և ի՞նչ պատճառաւ մարմնաւոր կամ արտաքին պակասութիւնք կ'արգելուն զոք քահանայական կամ աւելի բարձր եկեղեցական կոչումն ընդունելէ:

Ինչպէս նոր ուխտի, նոյնպէս՝ հին ուխտի մէջ քահանայութիւնն էր այն մեծ, վսեմ, սուրբ և նուիրական կոչումն, զոր ընդունողք պաշտօն ունէին միջնորդ կալ ընդ Աստուծոյ և ընդ մարդկան, մատուցանելով զոհեր, նուէրներ ու պատարագներ առ Աստուած՝ ժողովրդեան մեղաց քանութեան համար և կատարելով հրապարակաւ ամէն կրօնական կամ Աստուածային պաշտամունք. բաց յայցանէ, ինքեանք պարտէին հոգ տանիլ ժողովրդեան բարոյական դաստիարակութեանը, և իրենց իրաւունքն էր քննել անոնց մէջ պատահած վէճերն և անօրինել պարտ ու պատշաճը, և այլն: Բուն քահանայութիւնը հաստատեց Աստուած Սինայի անապատին մէջ Մովսիսի ձեռամբ յանձին Ղեւեան Ահարօնի և որոյ ցեղին միայն յատկացաւ այդ պաշտօնի իրաւունքը: Եւ որովհետև ստուերական օրինաց քահանայութիւնն, նաև բոլոր զոհք ու պատարագք՝ կերպարան ու օրինակն էին միայն միայնոյ ճշմարիտ քահանային և անարատ Զոհին Յիսուսի Քրիստոսի, այն պատճառաւ յատկապէս հրամայեցաւ յԱստուծոստ՝ զի քահանայք և ամենայն զոհք ու պատարագք լինին ըստ ամենայնի սուրբ, անարատ և կատարեալ որպէս իսկական քահանայն և Զոհն՝ Յիսուս Քրիստոս: Արդ՝ եթէ հին ուխտի քահանայներէն ու զոհերէն կը պահանջուէր արտաքին անարատութիւն և կատարելութիւն, նոր ուխտի, շնորհական օրինաց քահանայներէն ալ աւելի կը պահանջուի. զի բուն իսկ տիպն են իսկական քահանային Յիսուսի, և որ ինքեանք են քա-

հանայն և զոհն միանգամայն որ պատարագին և պատարագեն զՔրիստոս ի յիշատակ մեծի խորհրդոյն հաղորդութեան սահմանելոյն ի բուն իսկ Փրկչէն և որ կը լինի ի հաշտութիւն Հօր Աստուծոյ ընդ հաւատացեալ ժողովուրդս և կը բաշխի Հաց կենաց՝ հեղմամբ արեան կենարարին ի քաւութիւն և ի թոշութիւն մեղաց :

Ահա՛ քահանայութեան կամ եկեղեցականութեան նշանակութիւնը, և անոր ըստ ամենայնի անարատ լինելու էական պատճառը : Դառնամք այժմ բուն մեր հարցին և թուեմք այն «մարմնաւոր պակասութիւնները» զորս պէտք չէ ունենան եկեղեցական կոչումն ընդունող անձինք : Աստուածաշունչի Ղեւտական գրքէն կ'ուսանինք թէ՛ երբ Աստուած Մովսէսի միջոցաւ հաստատեց ծխական քահանայութիւնը, յատուկ օրէնք դրաւ նաև որ զոհագործ և նուիրամատոյց քահանայք չունենան հետեւեալ մարմնաւոր պակասութիւններն, այսինքն պէտք չէ լինին՝ ԿՈՅՐ, կաղ, կարճանչ, ականջատ, ձեռքեր, ոտքեր, սապատող, շիւ, պտղակն, քոսոտ, քաղցկեղ ունեցող և արութենէ զուրկ(1) : Աստուածային սոյն օրինաց կիրառութիւնը, իւր հաստատմանէն մինչ ցնոր ուխտ՝ և անտի մինչև մեր օրերը իջած, պահպանուած և յարգուած է յանձին քահանայացուի՝ ամէն Աստուածապաշտ և մանաւանդ քրիստոնեայ ազգաց մէջ բաւական ճշդութեամբ, ընդ որս նաև մեր Ս. Եկեղեցին ալ նոյն օրինաց տրամադրութիւնը ընդունած ու պահպանած է և ընդհանրապէս վերոյիշեալ կարգի արտաքին պակասութիւններն նկատի կ'առնու եկեղեցական լինելու փափաքողաց մասին :

Այսքանով կարծեմ բացատրուեցաւ ու հասկցուեցաւ թէ՛ ո՞րք էին այն մարմնաւոր արտաքին և թէ՛ ի՞նչու կ'արգելու զոք եկեղեցական կոչումն ընդունելէ : Բայց հոս կ'արժէ աւելին մը տածել և իմանալ որ՝ եթէ արտաքին կամ մարմնաւոր կատարելութիւնն այնքան հարկաւոր է հոգեւորականի մը, ի նմանութիւն՝ Քրիստոսի արտաքին կատարելութեան, հա՞պա որչափ ևս առաւել անհրաժեշտ են ներքին կամ հոգեւոր կատարելութիւնը, յանձին մէն մի եկեղեցականի՝ բուն զՔրիստոս ներկայացնելու համար : այս՝ առ հասարակ ամէն մարդու համար կարևոր է գիտ-

նալ, և եթէ բանասէր ընթերցողք փափաքին իմանալ թէ՛ այդ հոգեւոր կատարելութիւնը ո՞րք են որ կ'արժանացնեն զոք ճշմարիտ եկեղեցականութեան, ատոր համար ալ ցոյց կուտամք և կը հրաւիրեմք մեր մայր Միսարանի կամ Մաշտոցի վարդապետական «Մայրաքոյն իշխանութեան» կարգին վերջը դրուած խրատներն ու բարոյական ընտիր օրէնքները կարդալ, զորս մեր ուղղափառ եկեղեցւոյ Սրբազան Հայրապետք, առաքելական կանոնի հիման վերայ՝ սահմաներ, գրեր, զարդարեր ու ճոխացուցեր են եկեղեցական որ և է աստիճանի կոչումն ընդունողներու համար : Այդ կանոնաց մէջ միայն ներքին կատարելութեանց և Աստուծային ուսման հարկաւորութիւնը յառաջ բերուած է Ս. Գրոց ընտիր վկայութեամբ, և կարդալով զանոնք կ'ուսանինք ընդ նմին թէ՛ այդ ներքին կատարելութեանց ներհակ՝ ներքին արտաքին և թերութիւնք ո՞րքն աւելի անարժան կ'առնեն զոք եկեղեցական լինելէ, քան արտաքին «մարմնաւոր պակասութիւնք» որք ներքնոյն օրինակն են միայն :

Ուրեմն ջանամք ի միասին համայն եկեղեցականքս և աշխարհականք, իւրեւ միակ հոգեւոր գլխոյն Քրիստոսի հոգեւոր անդամները, ունենալ այն ներքին ու հոգեկան կատարելութիւնները որոց համար իւր Աստուծային բերնով կը պատուիրէ՝ ամենեցուն ասելով՝ «Եղբր՛ւք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» :

Դ. Վ. Յ.

ԹՈՆԴՐԱԿԵՑԻՈՑ ԱՂԱՆԴԸ

Եւ էջմիածնայ մի միաբանի այդ աղանդի մասին քրա՞ծ աղանդակները :

Ս. էջմիածնայ տպարանէն ի լոյս ընծայուած է Անանիա Նարեկացւոյ «Դիր խոստովանութեան» վերնագրով 13 երեսէ բաղկացեալ մի գրքոյկ, Տ. Տեղակալի հրամանով արտատպուած 1891 տարւոյ «Արարատ» ամսագրէն :

Այդ հրատարակութեան առթիւ մեր ընելիք դիտողութիւնները չեն վերաբերի Նարեկացւոյ հեղինակութեան : Այդ աշխատութիւն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի համառօտ խոստովանութիւն, մի հաւատոյ հանգանակ, զոր Անանիա կաթողիկոսի հրամանով գրած է Նարեկացին՝ իւր մասին տարածուած զրպարտութիւններն հերքելու և մասամբ, իւր հեղինակաւոր խօսքով, Թոնդրակեցւոց աղանդը՝ դատապարտելու համար : Մեր դիտողութիւնը կը վերաբերի իսկապէս այդ «խոստովանութեան»

գիրքը հրատարակող միաբանի գրած խորհրդաւոր յառաջաբանին :

Բայց որպէս զի ընթերցողը որոշ դաշտաւոր չազմէ նորա վերաբերմամբ, հարկ է որ դէթ համառօտ բացատրեմք թէ ի՞նչ բան էր Թոնդրակեցւոց աղանդը, ըստ որում մեր տոհմային և եկեղեցական պատմութեան անձանօթ ընթերցողը հարկաւ անձանօթ կը լինի նաև Թոնդրակեցւոց աղանդին, նորա ծագման և պատմութեան :

Իններորդ դարու կիսոյն երևան եկաւ այդ աղանդի վարդապետութիւնը Ապահունեաց գաւառի Թոնդրակ աւանի մէջ, Սմբատ Աբլարսա անունով մի Հայի ձեռքով :

Այդ Սմբատի վարդապետածն իսկապէս Մանիքեցւոց աղանդն էր, որուն հիմնադիր կը համարուի Մանի անունով մի կռապաշտութենէ ի քրիստոնէութիւն դարձած քահանայ, որ կ'ապրէր երրորդ դարու մէջ : Նորա աղանդաւոր վարդապետութիւնը կը կայանար հետեւեալի մէջ. նա կ'ընդունէր ըստ հին դէնի մը՝ երկու սկիզբ—բարի և չար. կը հերքէր սկզբնական մեղքը, չէր ընդուներ հին կտակարանը :

Այս աղանդը, որ իւր հիմնադրի անունով կոչուեցաւ Մանիքեցւոց աղանդ, երևան եկաւ բնագաւառի մէջ Եօթներորդ դարու վերջին կիսոյն Ներսէս Դ. Շինող կաթողիկոսի օրով : Եւ որովհետեւ այդ աղանդը տարածողներուն գլխաւորին անունը Պօղոս էր, ուստի աղանդըն ալ նորա անունով կոչուեցաւ Պօլիկեանց կամ Պաւլիկեանց :

Այս Պաւլիկեանք Մանիքեցւոց աղանդի վրայ աւելցուցին և ուրիշ հերձուածներ. այն է՝ մերժեցին եկեղեցւոյ խորհուրդները և անարգեցին Քրիստոսի խաչը և սրբոց պատկերները : Աղանդաւորաց ի գործ դրած եռանդին հակառակ, ուղղափառ Հայերէն նոքա շատ քիչերը կարողացան մոլորեցնել, և նոյն իսկ չկարողացան բնագաւառի մէջ իրենց համար հաստատուն կայան հիմնել, այլ վաղընդիւյթ վաւտուելով ցրուեցան դէպ ի Պարսկաստան, Փոքր Ասիա և այն տեղէն Յունաստան :

Իններորդ դարու կիսոյն, այն է 840 թուականին, Ովայեցի Յովհաննէս Ե. կաթողիկոսի օրով Թոնդրակ աւանի մէջ երևան եկաւ յիշեալ Սմբատ Աբլարսան որ ծննդեամբ Մաղկոտն գաւառի Զարեհաւան գիւղէն էր : Ինքը թէպէտ աշխարհական, բայց եպիսկոպոս ձեռնցած էր և առերեսու բարեպաշտութեամբ կարողացաւ շատերը գրաւել : Նորա բուն վարդապետութիւնը, որ Մանիքեցւոց յայտնի աղանդի շարունակութիւնն էր, կը կայանար հետեւեալի մէջ. նա կ'ուրանար Աստուծոյ նախախնամութիւնը,

(1) Անշուշտ այս և այս կարգի արատոց և թերութեանց նկատմամբ կարելի է մտածել որ՝ ոչ միայն բարոյական և խորհրդաւոր՝ այլ նաև ամէն տեսակէտով անյարմար և անվայել է եկեղեցական պաշտօնէի մը ունենալ անոնցմէ որ և է մին :

սուրբ Հոգւոյ շնորհքը եւ հանդերձեալ կեանքը, նա չէր ընդուներ եկեղեցական խորհուրդները, մեղքը եւ պատիժը, կ'արհամարհէր Քրիստոսի եւ սրբոց պատկերները, չէր հաճաչեր օրէնք եւ իշխանութիւն, կը ծաղրէր ամէն կարգ եւ կանոն: Բայց որովհետեւ այս բոլոր հրաժարումները արձակ համարձակ քարոզելը, մանաւանդ նոյն դարու Հայոց մէջ մեծ ազմուկ ու շփոթութիւն, եւ իւր դէմաւ հալածանք կը յարուցանէր, այդ պատճառով ինչպէս Սմբատ, նոյնպէս եւ նորա հետեւողք արտաքուստ կը ձեռնային ճամարիտ հայ քրիստոնեայ եւ իրենց աղանդի էութիւնը չէին յայտնէր երբեք այնպիսեաց զորոնք որսալու յոյս չունէին: Այս վերջին պայմանները մանաւանդ օգնեցին Սմբատին, որ կարճ ժամանակի մէջ Թոնդրակ աւանն ամբողջապէս իրեն հետեւող դարձաւ: Այս մոլորութեանց վրայ աւելցած ուրիշ նորանոր մոլորութեանց պատճառաւ իրենց ժողովարաններն Արիստակէս Լաստիվերտացիին կողմէն Շնավանք, իսկ դոցա գործը Գրիգոր Մագիստրոսը կ'անուանէ «գիշերային եղեռնագործութիւն, զազարլի եւ քստմեղի ատակութիւն»: »:

Եւ որովհետեւ այս աղանդն առաջին անգամ ընդհանուր ընդունելութիւն գտաւ Թոնդրակ աւանի մէջ եւ այնտեղէն տարածուեցաւ ուրիշ կողմեր, այդ պատճառով անուանուեցաւ Թոնդրակեցւոց աղանդ: Թոնդրակէն յետոյ նոյն աղանդի կեդրոն դարձաւ նաեւ Մանանդի գաւառի Թուլայլ աւանը. այս պատճառով պատմութեան մէջ այդ աղանդը յայտնի է նոյնպէս Թուլայլեցւոց աղանդ անունով:

Թէ այնուհետեւ ի՞նչպէս տարածուեցաւ այդ աղանդը, ո՞րպիսի ընդունելութիւն գտաւ բնավայրի ներքին գաւառներու մէջ, ի՞նչ պաշտպաններ ունեցաւ եւ ո՞րպիսի խտրութեամբ ու եռանդով հալածուեցաւ ուղղափառ Հայքէն, — դորա պատմութիւնը երկար է եւ օրաթերթի սուղ էջերը թոյլ չեն տար ամբողջութեամբ յիշելու մանրամասնութիւնները. այսքանը միայն կ'ըսենք որ Սմբատ Արեւադայի մեռնելէն յետոյ նորա սկսածը եռանդով շարունակեցին շատերը, որոցմէ պատմութիւնը կը յիշէ Թոդրոս, Անանէ, Արքայ, Սարգիս, Կիրեղ, Յովսէփ, Յեսու, Ղազար եւ այլն անունով աշխարհականներ, Հարք գաւառի Յակովբոս եպիսկոպոսն, Կունծիկ անունով մի արեւելայ, եւ այլն: Այս աղանդին պաշտպան կանգնեցան նոյնպէս ոյժ եւ կարողութիւն ունեցող մարդիկ, ինչպէս Վովէռ անունով մի կալուածատէր, նոյնպէս եւ հարուստ կանայք, ինչպէս եւ Հրանդը

տիկինը, Արնի եւ Կամարայ քոյրերը, եւ այլն: Թոնդրակեցւոց այս աղանդը հետզհետէ տարածուելով, սրահալանց իւր գոյութիւնը մօտ 200 տարի, Բոլոր այդ ժամանակամիջոցի մէջ, Յովհաննէս Ովայեցի Կաթողիկոսէն, սկսեալ մինչեւ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը, Հայրապետական գահի վրայ բազմող քսան եւ չորս Կաթողիկոսք եւ դոցա հետ բոլոր անուանի եպիսկոպոսք, վարդապետք մաքառեցան, կուռեցան այդ աղանդի դէմ թէ՛ լեզուով, թէ՛ գրչով եւ թէ՛ զօրութեամբ: Հայ ուղղափառ ժողովրդի հետ միասին զինուեցան այդ համաճարակ աղանդի դէմ նաեւ նշանաւոր հայ մեծատուններ որոց մէջ այդ մասին իւր ցոյց տուած արդիւնաւոր ծառայութեամբ, ամենէն աւելի յայտնի եւ հաշակաւորն է Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին, որու եռանդուն եւ անձնուէր ջանքերուն եւք պարտական գլխաւորապէս մեր եկեղեցւոյ այսօրուան ամբողջութիւնը:

Այս շրջաններէն մէկուն կը վերաբերի Անանիա Նարեկացւոյ խոստովանութեան գիրը, զոր նա գրած է Հայոց Անանիա Կաթողիկոսի հրամանով: Մեր մատենագիրներէն Ներսէս Շնորհալին եւ Գր. Մագիստրոս գովութեամբ կը յիշեն Նարեկացւոյ այս գրուածքը, անուանելով զայն «Ճառ ընդդէմ մոլորութեան Թոնդրակեցւոց». բայց, ինչպէս մեր առջեւ գրուած հրատարակութենէն կը տեսնենք, դա, իսկապէս, ոչ ճառ է եւ ոչ ալ Թոնդրակեցւոց աղանդի մասին բանասիրական մի գրուածք, այլ, ինչպէս նկատեցինք, պարզ խոստովանութեան մի գիր՝ որ կը հերքէ այն սուտ կարծիքներն, զորս չարասէր մարդիկ տարածած էին Նարեկացւոյ համար՝ իբրեւ թէ նա եւ չաղախուած էր Թոնդրակեցւոց մոլորութեամբ:

Պէտք է շնորհակալ լինել «Արարատ» ին որ մինչեւ այժմ կորսուած համարուած այս գրուածքը հրատարակելով ի լոյս հանեց է, որ եւ, հարկաւ, իւր պատուաւոր տեղը կ'ունենայ մեր հին պատմագրութեան շարքի մէջ: Բայց այս հրատարակութեան մասին խօսելով, պիտի ըսենք, ինչպէս արդէն նշկատեցինք, որ այս րոպէին մեր գլխաւոր ուղղութիւնը գրաւող խնդիրը ո՛չ թէ Անանիա Նարեկացւոյ «Խոստովանութեան գիր» ի լոյս ելնելն է, այլ այն խորհրդաւոր յառաջաբանը, զոր գրեց է այդ գրուածքի հրատարակիչը: Խորհրդաւոր կը համարինք այդ յառաջաբանը անոր համար, որ ա) հրատարակողը ինչ որ ուզեց է ըսել, չէ ըսած, այլ բաւականացեր է մի քանի վարագործեալ անհարկութիւններով: Բ) որ այդ անհարկները իւր հրատարակած

գործի ոգոյն ոչ թէ համակիր, այլ հակառակ տրամադրութիւն ունին եւ գ) այդպիսի տրամադրութեամբ տողորուած մի գրուածք լոյս է տեսած) յէջ միածին մեր Մայր Աթոռի տպարանի մէջ:

Նախ մեզ համար անհատական ի է թէ ինչո՞ւ անպատճառ «ուղղորդութեան արժանի է՝ որ հայկական մարքի որ եւ է արտադրութիւն (հարկաւ աղանդաւոր, որովհետեւ խօսքը դորա մասին է) երբեք չունենայ քիչ թէ շատ զգալի ազդեցութիւն ազգային նեղ սահմաններէ դուրս», եւ ի՞նչ մեծ սարձանք է հայութեան համար որ՝ «միակ բացառութիւնը այդ կանոնէն, հայկական մտածողութեան միակ արդիւնքը (Թոնդրակաւութեան) աղանդաւոր եւ հակաուղղափառական մտածողութիւնը դուրս եկաւ բնավայրի սահմաններէն եւ տարածուեցաւ հեռուն՝ Փոքր Ասիա, Միջագետք, եւ այլն»:

Բնական է ի հարկէ որ մարդս ցանկանայ, որ իւր բնավայրի մէջ ծնունդ առնեն ընդհանուր մարդկութեան համար բարիք ստեղծող գաղափարներ, որոնք եթէ տարածուէին աշխարհի մէջ, պատիւ բերէին այդ տեսակ գաղափարներ յղացող ազգին: Դա գեղեցիկ նախանձաւորութիւն է: Բայց ցանկանալ որ աղանդներ ծնունդ առնեն մեր մէջ եւ այդ միայն նորա համար, որ նոքա նոր գաղափարներ կը քարոզեն, այդ անհեթեթ բան է: Աշխարհի մէջ այսօր նոր գաղափար գրեթէ չկայ, ամէն գաղափար հին է, եւ այն, ինչ որ կը կարծեն թէ այս կամ այն խմատունը կամ փիլիսոփայն ըսեր է, դարերով առաջ ըսած է մի ուրիշ, որ գուցէ իմաստունի կամ փիլիսոփայի հոգակ չէ՝ ունեցած: Բայց ճամարիտ մարդը չպիտի յախտակուի իւր բնավայրի մէջ ծնունդ առած այն գաղափարներով որոնք նոր են, (միթէ քիչ նորութիւններ կան, որոնք մարդկութեան համար չարիքներ, պատուհասներ են), այլ այն գաղափարներով, որոնք պատուաբեր են:

Արդ, Թոնդրակեցւոթիւնը երկու դարէ աւելի յուզած, աղմկած է Հայ ժողովուրդը. նորա նպատակը եղած է՝ բաժանել եւ պառակտել ամէն միաբանութիւն, քայքայել ընտանիք, պղծել նորա սրբօրիւնը, միով բանիւ, հեմարիս քրիստոնէութիւնը ոչնչացնելով՝ պատուասել նորա սեղ կապաւոսութիւնը: Մեր խօսքերը ապացուցանելու համար բաւական են մինչեւ նորա մեզ հասած պատմական փաստերը: Ուրեմն, եթէ մինչեւ անգամ ընդունինք թէ Թոնդրակեցւոց աղանդը Հայոց մէջ երեւան ելած, եւ հայկական ուղեղի ծնունդ է,

լաւ, ինչո՞ւ համար պիտի թոնդրակեցական գաղափարաց այդ վիժմունքով պարծենանք. միայն անոր համար՝ որ մեր մէջ ալ մարդիկ են եղած, որոնք նոր գաղափարներ են յայտնած, և այդ նոր գաղափարներով ուզեր են քրիստոնէական եկեղեցին քայքայել...

Այդպիսի հերետիկոսներ քրիստոնէութեան առաջին դարերէն ըսկըսեալ երեւցած են ամէն ազգաց մէջ, բայց այդ ազգերէն որը կը պարծենայ նոցա հերետիկոսական վարդապետութիւններով:

Միթէ յունագական եկեղեցին կը պարծենայ Պրիգուսներով: Միթէ Հրեանք կարող է՞ երբէք պարծենալ Մորմոնայ աղանդով: Միթէ Եջմիածինը պիտի պարծենայ Թոնդրակեցիներով: Եւ միթէ ձրի զրպարտութիւն չէ՞ յայտարարելն թէ բողոքականութեան հեղինակները Հայեր են:

Հրատարակիչն այնքան սիրահար է վերանորոգութեան, նոր գաղափարաց վարդապետութեան, որ բողոքականութեան նախահայրերն ալ Հայոց բնավայրէն բուսած կը համարի (1) և այդ պարծանքը լիովին վայելելու համար՝ չը քաշուի որ միայն պատմութիւնը խեղաթիւրելէ և մեր նախահայրերը զրպարտելէ, այլ և ներկայ սերունդի համար գայթակղութեան քարեր կը գլորէ:

Գայթակղութեան քարեր կ'անուանենք այդ խօսքերը նորա համար, որ առանց անոնց ալ բողոքականութիւնը մարդորսաց ձեռքով կը տարածուի մեր մէջ, առանց անոնց ալ անկարող ենք մարդորսներու ստեղծած պառակտումները կարկատելու. ի՞նչ կը լինի մեր ճարը, եթէ մեր եկեղեցական պատմութեան անձանթ թիւրաւոր Հայերը մի վայրկեան անգամ հաւատան և համոզուին թէ արդարեւ լուստերականութեան նախահայրերը մեր մէջէն ելած են, թէ նոքա Հայոց բնավայրէն էին, և այլն:

Այս դեռ բաւական չէ. «Սոստովանութեան գրի» հրատարակչի խորհրդաւոր խօսքերէն կ'երևի որ նա նեղացած վրդովուած է, որ մեր ուղղափառ եկեղեցւոյ զգաստ և աշաւորը հովիւները, հայ եկեղեցւոյ անձնուէր մեծատունք հալածանք յարուցեր են Թոնդրակեցւոյ դէմ, և նոցա աղանդը իրենց

(1) Հաւանական է որ Լուստերի պապն էլ Վաղարշապատցի լինէր:

Ծ. Խմբ. «Նոր-Իտա»ի (2)

(2) Հաւանական է որ Գրիգոր Արծրունին ալ Լուստերի թոռը լինի: Ահանջները խօսին Խարբերդեցւոյ և Բալուցւոյ որոց առաջարկուած է կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար պատգամաւոր ընտրել Գրիգոր Արծրունի: Ծ. Խմբ. «Մաղիկ»ի:

մէջէն արմատախիլ ընկելով, վրիկեր են մեր եկեղեցին կործանում:

Հրատարակիչը կ'ըսէ թէ Հայ «ուղղափառութիւնը պաշտպանուած էր անհերքելի միջոցներով...»

Իսկ Թոնդրակեցւոյ մասին կը գրէ որ «առաջին դարերի քրիստոնեաների վայել անվեցեալութեամբ, ամէն նեղութիւններէ եւ հալածանքներէ յանձնառութեամբ քարոզում և ծառայում էին աղանդաւոր վարդապետութիւնը:»

Յայտնի է պատմութեանէն որ Թոնդրակեցւոյ աղանդին ամենամեծ հարուածը տուաւ արժանաշիշատակ Պահլաւունեաց ցեղի արժանաւոր ժառանգ Գրիգոր Մագիստրոսը: Սա միջադէտաց միջ եղած ժամանակ հզօր դիմադրութիւն ցոյց տուաւ այդ աղանդի ծաւալման: Ի սկզբան ի հարկէ շատ աշխատեցաւ սիրաշահիլ այդ աղանդաւորներն և վերադարձնել դանոնք Հայաստանեայց եկեղեցւոյ գիրիւր, բայց տեսնելով որ քաղցրութեամբ չպիտի լինի, սկսաւ ամէն տեղէ հալածել դանոնք՝ հանգիստ չտալով այդ աղանդի առաջնորդներուն: Բաց ի այդ, նա գնաց Թոնդրակ աւանը, աւերեց աղանդաւորաց ժողովարանները և անոնց տեղ ուղղափառութեան պաշտպան եկեղեցի կանգնեց:

Եւ ահա մեր հրատարակիչը յուզուած այս մեծ մարդու կատարած մեծ գործի դէմ՝ կը գրէ. «Չնայելով Մագիստրոսի փոքրուոյց խօսքերին և անորի հալածանքներին, մենք կարծում ենք որ ոչ թէ հալածանքները վերջ դրին այդ աղանդին ի Հայս, այլ ուրիշ ազգաց արշաւանքներն, և այլն»: Եւ որպէս զի ցոյց տայ թէ այդ աղանդը այնքան երեւելի բան էր, որ մեծամեծներէն ալ պաշտպանութիւն գտաւ, կ'աւելցնէ որ նորա «հետեւողները մեծ մասը իրենց պաշտպան մեծատունների հետ տեղափոխուեցին Արեւմտք, Ասորիք, և այլն. իսկ մի ուրիշ տեղ կ'ըսէ. «ամբողջ գաւառներ և նահանգներ իրենց եպիսկոպոսներով անցնում էին հալածուած խոտանգուած աղանդաւորների կողմը»:

Կը գտնուին, ի հարկէ, մարդիկ, որոնք ոչ միայն մի աղանդի, այլ և անաստուածութեան վերաբերմամբ համակիր կարծիքներ կը յայտնեն (հարկաւ ուշադրութեան անկելով այդ տեսակ կարծիքներ յայտնելու տեղն ու ժամանակը), բայց դժուար թէ գտնուի մի բանասէր, որ իւր այդ տեսակ համակրութիւնը այլոց կ'ընել տալու նպատակով յանձն առնէ սուտ խօսիլ և պատմութիւնը խեղաթիւրել:

Օրինակի համար, ի՞նչ մեծատուններ են դոքա որոնք պաշտպան են կանգներ Թոնդրակականութեան: Յայտնի է

միայն Վրվեռ անուանով մի հարուստ կառուածատէր, որ դէպ ի Արեւմտք գընացող Թոնդրակեցւոյ հետ հեռանալով՝ գնաց Բիւզանդիոն և այնտեղ ալ ոչ թէ իւր աղանդը պաշտեց, այլ յունագականութիւն ընդունեց:

Իսկ Սիւնեաց նահանգը իւր եպիսկոպոսներով երբ է անցել աղանդաւորաց կողմը. չէ՞ կարելի որ ցոյց տան մեզ թէ ո՞ր գրուած է այդ հրաւեր պատմութիւնը: Որովհետեւ, արդարեւ, դա մի հրաշք կը լինէր, եթէ Սիւնիքը, Ս. Տաթեւի վանուց հոգակաւոր միաբանութեան հայրերիքը, անցնէր աղանդաւորաց կողմը...

Կ'երևի այս պատմական նորութիւններն ալ կապ ունին այն աւետեաց հետ զոր հրատարակիչը իւր ընթերցողաց կուտայ ըսելով. «Ինչպէս յայտնի է, այդ աղանդը շարունակեց և կը շարունակէ իւր գոյութիւնը մինչեւ մեր օրերը ի խնուս և յԱլեքսանդրապոլ»:

Ինչ ալ որ եղած լինի, խնդիր է թէ ի՞նչ նպատակով սկսած են այժմ ջատագովել Թոնդրակեցւոյ աղանդը:

Բայց և այնպէս այս ամենէն եզրակացութիւններ հանելը կը թողուի ուշիմ ընթերցողաց:

(ՆՈՐ-ԴԱՐ)

ՄՈՒՐԱՑԱՆ

ԱՆՈՒՇԻԿ Ե ԹՕՓԻԿՍ

Պահուց օրեր պատկառելի,
Վաղեն լսել Տէր ամէնակալ.
Ժիր պառւիկն ալ երանելի,
Ժամ գայ ուշիկ ծունկերն ի ծալ:

Ժամն է, այո՛, ըսկըսեր.

Դուրսը նըստած Անդրանիկ,
Տէսէք թընդայ ձայնն կերկեր,
Անուշիկ է իմ թօփիկ...

Օհ, Հայրմերէն շուտ կըսկըսի,
Խոնկէն առաջ ալ կը բուրէր
Պահուց թօփիկըն սիրելի
Ժամուն դուռը, ախորժարեր:

Իւզին մոմին մէկ մէկ տաւոց,
Մնացածովն ալ մէկ թօփիկ
Ժամուն էլուն դընէ յիւր ծոց,
Տանէ թուանց մեր ժիր պառւիկ:

Տունը մնացած և զառամ

Աղջիկ մը ալ գընել ցանկայ...

Մինչ «թօփիկս է պղպղղահամ»

Պոռայ Անդրանիկ հոն անխընայ...

Մարգն արհեստին մէջ է վարպետ,
Նստած փչէ իւր նարկիլէն:

Աչքը չորս դին, յառաջ ու ետ

Թո՛ղ կ'ախորժի իւր թօփիկէն...

Ալ չի մընաց, օրերն անցան,

Ալ թօփիկնիս տե՛ս հարս կ'ըլլայ,

Վերջին թողով իւր խապոտ ձայն

Թապան գլխուն կեւէ կերթայ...

Կէսիկ-բաւա

Ա. Հ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբախտութիւնք. — Բիւշտի պէյ՝ Ա. քչէ Տաղի (Սարբերդ), Սիւլէյ-ման Բիւշտի էֆ. Պէհէսնի (Սարբերդ), Օսման Նուրի էֆ. Իլիինի (Քօնեա) և Մուսթաֆա էֆ. Գաշի (Քօնեա) գայ-մագամ անուանեցան:

Ասիւնանք. — Կիւմիւլէինէի թղթակ-ցութեանց տեսուչ՝ էմին էֆ. ի Րապիայի աստիճան տրուեցաւ:

Պատգամաբախտութիւնք. — Կայս. Անձ. Գոնձուն նախարար՝ Վսեմ. Փորթուգալ Միքա-յէլ էֆ. ի Ա. Օսմանիյէ պատուանշան շնորհուեցաւ:

— Գարամուսայի մէջ Ֆէսի և բրդէ ու բամպակեայ կերպաններու գործա-րան մը հաստատելու համար արտօ-նութիւն խնդրուած է:

— Զմիւռնիոյ մէջ 16 տարեկան աղ-ջիկ մ'ապիս Ֆէնիֆով անձնասպան եղեր է՝ իւր մօր չարութեանց չկրնալով հան-դուրժել:

— Երէյիէն Եորսուլա երկաթուղիի մը շինելու համար արտօնութիւն խնդ-րուած է Ֆրանսացւոյ մը կողմէ:

— Թէնպէիի Ընկերութեան բաժ-նետէարք յառաջիկայ երեքշաբթի բա-ցաւարար Ընդհ. Ժողով կազմելու հը-րաւիրուած են ի Բարիզ, 2000 նոր բաժ-նետոմսից խնդրոյն վրայ խորհրդակցե-լու:

— Վեհ. Սուլթանը հինգշաբթի օր, Բամագանի 15ին, Նըրքայը Շէրիֆի տօ-նին առթիւ, Պոլսոյ Թօփդարուի պալա-տան մէջ գտնուած Նըրքայը Շէրիֆը մեծաշուք հանդիսիւ այցելելով, Իւր ուխտը կատարեց, ի ֆթարն անդ ընելէ յետոյ, գիշերը ժամը 1ին Վէզնէիէրի, Ազապդարուի և Բերայի ճամբով դար-ձաւ Պէշիքթաշ: Այս առթիւ Իւր ճամ-բուն վրայ բարեւի կեցող զինուորաց և վարժարանաց աշակերտաց դրամական պարգևներ շնորհեց:

— Գաղաթիոյ երկաթուղւոյն առա-ջին վայրաշարժը սեպտ. 3ին Գաղատիա պիտի մտնէ և հոկտ. 3ին ամբողջ գծին բացուի պիտի կատարուի:

— Լըպէ դրամասան պահանջատէարք հաւանեցան պայմանաժամեր շնորհել պարտատէարց որք իրենց պարտքն ամ-բողջովին պիտի վճարեն այսպէս:

— Սնանկութիւն հրատարակած է Ղալաթիա Սափար խանը հաստատուած Սալոմոն Քօէն և Ընկ. սեղանաւորական Հրեայ տունը, 20.000 ոսկի պարտքով:

— Պէրուք զրկուող տեղական կաշե-ղինաց համար դրոշմի տուրքը ջըն-ջուած է:

— Ասանա, Թարսուս եւ Քօզան պա-ճարախտ ճարակեր է:

— Նգիպսուի խտիվ՝ Ապպաս փաշայի շնորհեալ Կայս. Ֆէրմանին ընթերցումը հինգշաբթի օրը տեղի ունեցեր է՝ մեծ հանդիսիւ Գաշիիէի Ապէտին պալատան մէջ ժամը 3 1/2ին: Այդ առթիւ ընդու-նելութիւնք և լուսավառութիւնք կա-տարուեր են:

— Դաւառաց մէջ գործաւորք խը-ճուցեաց շինութեան համար չորս օր ձրիաբար աշխատիլ պարտաւոր են և

անոնք որ աշխատելու փոխարէն դրամ տալ կը խոստանան ու չեն տար, այդ դրամը վճարելու պիտի բռնադատուին:

— Տրապիզոնցի Զիւհտիզատէ Հաֆզ Մէսուտ էֆ. և Տիմիթիի Հաճի Բա-նայաթիտի էֆ. 15000 ոսկի դրամա-գլխով առեւտրական ընկերութիւն մը կազմեր են, որուն շահուն 1 0/10 է նա-հանգին նախնական վարժարանաց պի-տի յատկացնեն:

— Թուրքիոյ մէջ արմտեաց տեսակն ազնուացնելու և քանակութիւնն առա-տացնելու համար Ամերիկայէն յատուկ հունտեր պիտի բերուին և հողագոր-ծաց պիտի բաշխուին. առ այս 3—4000 ոսկի պիտի յատկացուի:

— Նրկաթուղեաց Անատուլի գծին վրայ հարկ եղած տեղեր մթերանոցներ ու խանութներ պիտի կառուցուին ո-րոց շահը ընկերութեան և Կայս. կա-ռավարութեան միջև հաւասարապէս պիտի բաժնուի:

ՎՍԵՄ. ԲԵՇԻՏ ՊԵՑ

Վեհ. Սուլթանն ըստ արժանւոյն գը-նահատելով ներքին գործոց նախարա-

րութեան խորհրդական Վսեմ. Բէշիտ պէյի անցուցական ձրքերն, բարեհա-ճած է առաջին կարգի Մէճիտիյէ պա-տուանշան շնորհել նմա:

Բէշիտ պէյ մին է այն բարձրագոյն պաշտօնատարներէն՝ որք իրենց վարած կարեւոր պաշտօններով կը ցուցնեն տա-ղանդ և կարողութիւն, և կրնան ի-րական ծառայութիւն մատուցանել երկ-րին՝ իրենց բարեւոք պաշտօնավարու-թեամբ:

ԾԱՂԻԿ ևս բերկրութեամբ կը շնոր-հաւորէ զՎսեմ. Բէշիտ պէյ՝ իւր ար-ժանացած պատուոյն համար:

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ. լիբան 100 զրշ. էն

Մէճիտիյէ	108	8	Վեցնոց	102	20
Քաւարդ մէճիտ	106		Բաւարդ քօլ	89	32
Մանր մէճիտ	100	20	Նաբալէն	87	23
Մէթալիք	95	30	Գրիմից	51	15
Հինգնոց	101		Անգլ. լիբա	110	8

Մանէթ թղթագրամ 8 98

Գոնալիտէ	21	21	Բուժ. երկ.	72	3/4
Թահպիլ. Օսմ.	79	28	Թապիլիյէ	48	

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԵՐԶ

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ԳՈՒՆԱՒՈՐ ՏԱԽՏԱԿՈՔ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՔԱՐԱՆԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ



Բազմաթիւ ուսուցիչք և վարժարանաց Տնօրէնք սոյն դասագրքին հրատա-րակութեան փութացումը խնդրած լինելով, կը յայտարարեմք թէ տպագրու-թիւնն աւարտած է և այս պահուս Պաշտատեան տպարանը կ'զբաղի գրքին մէջ գետեղուելիք աշխարհացոյց գունաւոր տախտակաց պատրաստութեամբ:

Ձանազան վարժարաններէ եղած ստիպողական խնդրանքներուն գոհացում տալու համար, սոյն դասագրքիք այժմէն իսկ հրապարակ ելած է և յանձնարա-րութիւնք սկսած են կատարուիլ՝ աշխարհացոյց տախտակներն յետոյ առանձինն զրկուելու պայմանաւ. ամէն ոք կարող է զանոնք դասագրքին մէջ ինքնին գե-տեղել:

Դասագրքիքս կանխաւ որոշուածէն շատ աւելի ստուար և բազմածախ եղած լինելով, առ այժմ՝ պիտի վաճառի ի գին 4 զրշ, իսկ աշխարհացոյցերու տպագրու-թիւնն աւարտելէ յետոյ 6 զրշ: Մեծաքանակ յանձնարարողներու համար՝ աշխար-հացոյցներն յետոյ առանձինն պիտի զրկուին, կը բաւէ որ 2 զրշ տարբերութիւնը վճարուի:

Դասագրքիս օգտակարութեան մասին խօսիլն աւելորդ կը համարիմք, ու-սուցչաց թողլով գնահատել այն բանաւոր և գիւրուսոյց եղանակն որով աշխար-հագրութիւնն աւանդուած է այս Դասագրքին մէջ, տպագրութեան, թուղթին, պատկերներու և աշխարհացոյցներու գեղեցկութիւնն, Օսմանեան Պետութեան համար տրուած ընդարձակ բաժինը, մասնաւոր այն մասնաւոր պատկերացոյց տախտակը որուն մէջ յստակօրէն ի տես եկած են ցամաքաց և ջուրց զանազան ձեւերն, որոց առընթեր գունաւոր գծագրութիւններով ցոյց տրուած են. նաեւ թէ ինչպէս կը գծուին կամ կը ներկայացուին անոնք աշխարհացոյց տախտակ-ներու վրայ, բան մ'որ բոլորովին նարութիւն է և, գործոյն ուրիշ առաւելու-թեանցը հետ միանալով, կրնայ այս դասագրքին իւր տեսակին մէջ միակը հան-դիսացնել: